community

The New Apostolic Church around the world

04/2022/AM



Նույն շնորհը, նույն շանսը

Խմբագրական
Աստված նոր բան է ստեղծում

Ժամերգություն
Միասին կառուցել նոր տաճարը

Եկեղեցական ուսմունք
Պաշտոն հասկացողությունը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Աստված նոր բան է ստեղծում

Ժամերգություն

4 Միասին կառուցենք նոր տաճարը

Մանկական անկյուն

10 Հիսուսն օրհնում է երեխաներին

12 Այցելություն Ամբերին և Ելենային՝ Մաքքեյում /Ավստրալիա/

Տեսություն

14 Ակնարկ պաշտոն հասկացողության վերաբերյալ

Ընդհանուր լուրեր

18 Ինչի մասին են խոսում շրջանային առաքյալները

■ Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Հարավային Ամերիկա
■ Շապիկի ետևի լուսանկարը՝ Հարավային Ամերիկա

Աստված նոր բան է ստեղծում

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱՏՕ

Տերը նոր բան է ստեղծում: Սուրբ Հոգու միջոցով նա նաև նոր գիտելիքներ է արարում, նա մեզ առաջնորդում է դեպի Հիսուս Քրիստոսի կատարյալ գիտությունը:

Ես գիտեմ, որ շատերը դրա հետ կապված խնդիրներ ունեն: Տարիներ ի վեր նրանք հավատացել են ինչ-որ բանի, որը քարոզվել է երկար տարիներ, իսկ հիմա՝ ամեն ինչ այլ է և նոր:

Սակայն, ո՞րն է հիմա ավելի կարևոր՝ ա՞յն, ինչին դու տարիներ շարունակ հավատացել ես կամ ասել, կամ քարոզել, կամ լսել, թե՞ այն, ինչը բխում է Սուրբ Հոգուց և քեզ մոտեցնում Հիսուս Քրիստոսին:

Սիրելի քույր-եղբայրներ, մենք չպետք է ինչ-որ բանից կառչենք միայն նրա համար, որ մենք դրան հավատացել կամ դա լսել ենք երկար տարիներ: Խոսքը նրա մասին չէ, թե դա ճիշտ կամ սխալ է եղել:

Միակ հարցը, որը մենք պետք է տանք, դա այն է, թե արդյո՞ք այդ նոր գաղափարը ինձ ավելի է մոտեցնում Հիսուսին ու ավելի լավ է համապատասխանում նրա մտածելակերպին:

Եթե դա ինձ մոտեցնում է Տիրոջը, ապա ես գնում եմ այդ ճանապարհով և ընդունում եմ այդ նոր գիտելիքը: Եթե դա չի համապատասխանում Աստծո կամքին և ինձ հեռացնում է Հիսուս Քրիստոսից, ապա ես չեմ ուզում այդ նոր գաղափարը:

Բայց, եթե դա բխում է Սուրբ Հոգուց, ապա այդ նոր գիտելիքը տանում է դեպի փրկություն, օրհնանք, ընտրություն և ինձ ավելի մոտեցնում Հիսուս Քրիստոսի մտածելակերպին: Այդ դեպքում եկեք ընդունենք այն: Եղբայր, քույր, թույլ տուր, որ այն առաջնորդի քեզ:

Սրտանց ողջույններ՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Միասին կառուցել նոր տաճարը

Հոգեգալստյան ժամերգությունը տեղի ունեցավ Բուենոս Այրեսի / Արգենտինա/ կենտրոնական եկեղեցում

Լուսանկարը՝ Հարավային Ամերիկա

Կորնթացիներին Ա 3,16

Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճարն եք, և Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք շնորհակալ ենք մեր երկնային Հորը, որ նա լսել է մեր աղոթքները և հնարավոր դարձրել այն, որ մենք կարողանանք Հոգեգալուստը այստեղ՝ ձեզ հետ տոնել: Մենք ձգտել ենք դրան, և հիմա հրաշալի է դա ապրելը: Մենք նաև շատ շնորհակալ ենք, որ բոլոր շրջանային առաքյալներն ու շրջանային առաքյալների օգնականները կարողացել են մեզ հետ լինել: Նրանց ներկայությունը ինձ համար, նաև ձեզ համար, հատուկ նշանակություն ունի: Նրանք ներկայացնում են Աստծո բոլոր զավակներին, աշխարհի բոլոր նորառաքելական քրիստոնյաներին:

Ամբողջ աշխարհում նրանք միասին ղեկավարում են եկեղեցին, և նրանց շնորհիվ մենք կարողանում ենք հոգով կապվել ամբողջ աշխարհի բոլոր եղբայրների ու քույրերի հետ: Երբ ես մտածում եմ

ամբողջ աշխարհի Աստծո ժողովրդի մասին, պա նկատում եմ, թե ինչքան տարբեր կարող է այն լինել: Աստծո ժողովրդի մեջ մեծ բազմազանություն կա: Առաջինը՝ նրանք ապրում են տարբեր երկրներում, իսկ դուք գիտեք, որ որոշ երկրներում կա անվտանգություն և խաղաղություն, բայց երկրների մեծ մասում կա հանցագործության բարձր մակարդակ ու պատերազմ: Որոշ երկրներ շատ լավ են զարգացած, մյուսները՝ ավելի քիչ: Որոշ երկրներ՝ ապրում են բարեկեցիկ կյանքով, մյուսները՝ աղքատ: Դա ազդում է մեր եղբայրների ու քույրերի կենսապայմանների վրա, որոնք իսկապես շատ տարբեր են:

Մեր եկեղեցում ևս առկա է մեծ բազմազանություն: Որոշ երկրներում մենք ունենք միլիոնավոր անդամներ, որոշներում՝ գրեթե մեկ տասնյակ: Կան Աստծո զավակներ, ովքեր պատկանում են մեծ համայնքների, իսկ մյուսներն ամբողջովին միայնակ և առանձնացված են: Նայեք նրանց անձնական, անհատական իրավիճակներին, կտեսնեք, որ շատ են բազմազան: Շատերը՝ քաջ առողջ են, շատերը՝ հիվանդ: Կան հարուստ և աղքատ մարդիկ: Շատերը երկար են ապրում, իսկ շատերի կյանքի տևողությունը շատ կարճ է: Շատերն ունեն բազում շնորհներ, ունակություններ և պոտենցիալ, իսկ մյուսները՝ շատ ավելի քիչ: Հսկայական բազմազանություն:

Մենք կանչված ենք մեր շնորհներով և ուժերով նպաստելու այն բանին, որ ապագայում էլ տեղեկացվի Ավետարանը:

Որպես մարդ մենք չենք կարող դա բացատրել: Անիմաստ կլինի դրա մասին մտածելը, քանի որ մենք չենք կարող դրա պատասխանը գտնել: Այն ամենը, ինչ մենք գիտենք, դա այն է, որ Աստված ուզում է այդ անարդարությունը վերացնել: Սա այն ամենն է, ինչ մենք գիտենք:

Հոգեգալստյանը մենք տոնում ենք Սուրբ Հոգով լցվելը, և դա արտակարգ բան է: Աստծո բոլոր զավակները, ովքեր վերստին ծնվել են Սուրբ ջրով և Հոգով, ստացել են նույն նվերը՝ Սուրբ Հոգու շնորհը: Դրանով նրանք հնարավորություն են ստացել դառնալու Քրիստոսի պատկերի նման: Նրանք հնարավորություն են ստացել Աստծո արքայություն գնալու որպես առաջնեկներ: Եվ յուրաքանչյուրը, ով նորից ծնվել է ջրով և Հոգով, ստացել է Սուրբ Հոգու նույն շնորհը: Նա ունի նույն հնարավորությունը, նույն շանսը՝ որպես առաջնեկ Աստծո արքայություն մտնելու: Ոչ մի դեր չի խաղում այն հանգամանքը, թե կյանքի ինչ պայմաններում ես դու ապրում, առողջ ես, թե՝ հիվանդ, հարուստ ես, թե՝ աղքատ, ընդունակ ես, թե՝ ոչ: Կարևոր է միայն Քրիստոսի նման դառնալու քո կամքը: Եթե դու որոշել ես որպես առաջնեկ Աստծո արքայություն գնալ, ապա Աստված կհոգա այն ամենը, ինչի կարիքը դու ունես, ինչ պայմաններում էլ դու ապրելիս լինես: Սա Հոգեգալստյան ամենամեծ մխիթարությունն է: Ոչ մի դեր չի խաղում այն, թե որ համայնքին ես դու պատկանում, քանի տարեկան ես և այլն: Եկեք որոշենք գնալ Աստծո արքայություն և դառնալ Աստծո պատկերի նման: Ես ձեզ ասում եմ՝ դուք կարող եք դա անել:

Հոգեգալստյանը մենք տոնում ենք նաև Քրիստոսի եկեղեցու ծնունդը: Հոգեգալստյանը Քրիստոսի եկեղեցին հավատացյալների իրար հետ հավաքվելու միջոցով, ովքեր կնքվել են Սուրբ հոգով, տեսանելի է դառնում երկրի վրա: Պողոս առաքյալը Քրիստոսի եկեղեցին համեմատում է տաճարի հետ: Այն Նոր կտակարանի տաճարն է: Պողոսը ավելացնում է նաև, որ յուրաքանչյուր հավատացյալ մի քար է, ով Աստծո կողմից դրվում է այդ կառույցի վրա: Հին կտակարանում տաճարը երկրի վրա Աստծո բնակավայրն է: Իսրայելի ժողովուրդը գնում էր տաճար Աստծո հետ հանդիպելու համար: Նրանք հավաքվում էին տաճարում, որպեսզի հանդիպեն Աստծո հետ, գովաբանեն նրան և շնորհակալություն հայտնեն: Երբ նրանք հարձակման էին ենթարկվում իրենց թշնամիների կողմից, հավաքվում էին տաճարում և կանչում Աստծո օգնությունը: Նրանք գալիս էին նաև, որպեսզի Աստծուց ներում խնդրեն և զոհաբերական ընծաներ մատուցեն ներում ստանալու համար: Սա Հին կտակարանն էր:

Նոր կտակարանում Աստծո տաճարը եկեղեցին է: Եկեղեցին հավատացյալների ժողովն է, ովքեր մկրտված են և հետևում են Քրիստոսին: Մենք գալիս ենք ժամերգության Աստծո զավակների հետ միասին, որպեսզի Աստծուն հանդիպենք, քանի որ մենք գիտենք, որ ժամերգության ժամանակ հանդիպում ենք Աստծուն, միասին փառաբանում ենք նրա անունը և արտահայտում մեր շնորհակալությունը: Դա մենք անում ենք մեր աղոթքներով, երաժշտությամբ, մենք ներ

ենք դնում մեր շնորհները և բարին ենք անում մերձավորի հանդեպ: Դա ևս մի ճանապարհ է Աստծոն շնորհակալություն հայտնելու, մյուսներին՝ ծառայելու, ուրիշների հանդեպ բարին գործելու: Հիսուսն ասում էր՝ ,,Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին, իմ այս փոքր քույրերից մեկին արեցիք, ինձ արեցիք ,,/ հմտ. Մատթ 25,40/: Ուրեմն՝ արտակարգ հնարավորություն է մեր շնորհակալությունն արտահայտելու, եթե մենք Աստծո զավակների միասնությամբ հավաքվենք և միմյանց հանդեպ բարին անենք:

Մենք հավաքվում ենք նաև, որպեսզի Աստծո օգնությունը խնդրենք: Ամենից առաջ մենք խնդրում ենք, որ նա մեզ ազատի չարից: Մենք գիտենք, որ երբ մենք այստեղ ենք գալիս և Աստծուն խնդրում, որ մեզ օգնի, ապա նա դա անում է: Շատ վստահ մենք կարող ենք գալ դեպի մեր երկնային Հայրը և երկրային կյանքի հետ կապված բոլոր մեր հոգսերը պատմել նրան: Մենք վստահում ենք նրան, նա մեր Հայրն է, նա գիտի, թե մենք ինչի կարիք ունենք, նա դա մեզ երաշխավորում է: Եվ, երբ մենք աղոթում ենք միմյանց համար, նա լսում է մեզ:

Մեր կարևոր աղոթքը վստահաբար սա է՝ ,, Փրկիր մեզ չարից, մեզ տար դեպի քո արքայություն, ազատություն,,: Աստված լսելու է այդ աղոթքը: Նա արդեն աշխատում է ազատել մեզ չարից:

Մենք Աստծուց խնդրում ենք նաև մեր մեղքերի թողությունը: Երբ մենք մասին աղոթում ենք Հայր մերը, խոստովանում ենք մեր մեղքերը և միասին աղոթում ենք, որ նա մեր մեղքերը քավի, ների մեր եղբոր, մեր քրոջ մեղքերը: Աստված նաև այդ աղոթքն է լսում: Իսկ ամենագեղեցիկն այն է, որ մենք ստիպված չենք զոհաբերություն մատուցել մեր մեղքերի քավությունը ստանալու համար: Մենք ունենք Հիսուս Քրիստոսին: Նա է զոհաբերվել: Նա դա մեկ անգամ է արել, և դա բավական է: Նրա զոհաբերությունը հավերժորեն մնայուն է բոլոր մարդկանց համար: Երբ մենք հավաքվում ենք, տոնում ենք Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը, և մենք փառաբանում ենք Տիրոջն իր զոհաբերության համար: Դա մենք անում ենք, երբ տոնում ենք Սուրբ Հաղորդությունը: Մենք արտահայտում ենք մեր շնորհակալությունը: Հիսուս Քրիստոսը զոհաբերվել է, այն միշտ մնայուն է և միշտ մնայուն է լինելու:

Սա է նշանակությունն այն խոսքի, որ եկեղեցին Նոր ուխտի տաճարն է: Մենք հավաքվում ենք, որպեսզի մեր շնորհակալությունն արտահայտենք և Աստծուն գովաբանենք, որպեսզի աղոթենք ու խնդրենք, որ օգնի մեզ և մեր մերձավորին, մենք խնդրում ենք նրան մեր մեղքերի քավության համար, և մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը:

Հինկտակարանումտաճարընանայլնշանակություն ուներ: Տաճարի կառուցմամբ Սողոմոնը մի նշան էր ուզում ցույց տալ: Նա ուզում էր ամրագրել, որ բոլոր հեթանոսները կարող էին տեսնել, որ ամենազոր Աստված ապրում է երկրի վրա՝ իր ժողովրդի մեջ: Այսինքն՝ տաճարը նշան էր Աստծո ներկայության Իսրայելում և դրանով նաև՝ երկրի վրա: Քրիստոսի եկեղեցին Նոր ուխտի տաճարն է: Եկեղեցին նաև նշանն է այն բանի, որ Աստված դեռ ներկա է երկրի վրա և գործում է:

Յուրաքանչյուր հավատացյալ մեկ քար է, որը պատկանում է տաճարին

Երբ Պողոսն ասում է, որ յուրաքանչյուր հավատացյալ մի քար է, որը պատկանում է այդ տաճարին, ապա դա նշանակում է, որ եկեղեցու յուրաքանչյուր անդամ երկրի վրա Աստծո ներկայության մի նշան է: Կամ ավելի ճիշտ ասած՝ քանի որ խոսքը գնում է Հիսուս Քրիստոսի եկեղեցու մասին, պետք է յուրաքանչյուր հավատացյալ, յուրաքանչյուր քրիստոնյա մի նշան լինի այն բանի, որ Հիսուս Քրիստոսը ոչ միայն պատմության մեջ մի կերպար է, այլ նաև նա կենդանի է, նա ներկա է երկրի վրա և գործում է: Դու և ես, եղբայր ու քույր, մենք կոչված ենք երկրի վրա Աստծո գործունեության և ներկայության տեսանելի նշանը լինելու: Մենք կարող ենք վկայել, որ Աստված ապրում է մեր սրտերում: Նա հեռու երկնքում չէ, ում հետ կխոսենք ժամանակ առ ժամանակ: Ոչ, նա կենդանի է և ապրում է մեր սրտերում: Նա միշտ մեր կողքին է:

Քանի որ դա այդպես է, քանի որ Աստված մեզ մոտ է, քանի որ նա ապրում է մեր սրտերում, մենք պետք է դուր գանք Աստծուն և ոչ թե՝ մարդկանց: Դա պետք է այդպես լինի, բայց այդպես չէ: Երբ մենք տեսնում ենք, թե ինչքան էներգիան են մարդիկ վատնում, որպեսզի ուրիշ մարդկանց դուր գան, նրանք անում են ամեն ինչ, որպեսզի լինեն ուրիշների նման, որպեսզի համապատասխանեն տիրող կարծիքին, որպեսզի ասեն հենց այն, ինչ ուրիշներն են ասում, որպեսզի մի քանի ,,հավանումներ,, ստանան սոցիալական ցանցերում: Նրանք ուզում են հասկացվել մյուսների կողմից, կամ, եթե Աստվածաշնչի լեզվով ասենք, նրանք ուզում են դուր գալ մարդկանց: Իսկ ի՞նչ է լինում Աստծո հետ:

Ննջեցյալների համար Սուրբ Հաղորդությունը ստացան առաքյալներ Ժերարդո Զանոթթին և Գուլիերմո Կանեսսան, ովքեր այս ժամերգության ժամանակ հանգստի անցան

Մենք պետք է ապացուցենք, որ Աստված ապրում է մեր սրտերում: Եվ այսպես՝ մեզ համար ավելի կարևոր է լինելու Աստծուն դուր գալը, քան՝ մարդկանց: Մենք պետք է ապացույց լինենք նաև այն բանի, որ Աստված ոչ միայն ապրում է մեր սրտերում, այլ նա գործում է նաև եկեղեցում և մեր սրտերում: Դա տեսանելի կդառնա մեր հոգևոր զարգացման մեջ: Ես գիտեմ, որ սա նոր բան չէ: Դա քարոզվել է տասնամյակներ և դարեր ի վեր:

Սակայն՞ ես ինձ լրջորեն հարց եմ տալիս՝ ինչպիսի՞ն է հոգևոր զարգացումը: Գեղեցիկ է լսել՝ ,, Այո, մենք նախապատրաստվում ենք Քրիստոսի գալստյանը, հաճախում ենք ժամերգությունների, զոհաբերություն ենք անում,,: Հարցը, որ առաջադրվում է, միշտ նույնն է՝,, Դուք փոխվել ե՞ք,,: Յուրաքնաչյուրը կարող է ինքնուրույն պատասխանել: Խնդրեմ, մի մտածեք ձեր մերձավորի կարծիքի մասին, դուք ինքնուրույն մտածեք: Ես կլինեմ բացարձակ ազնիվ ու կասեմ, որ ես գոհ չեմ իմ պատասխանից: Դրա վրա մենք պետք է աշխատենք: Այնքան շատ բաներ կան, որոնք մենք պետք է փոխենք, որոնք մենք կարող ենք փոխել մեր մտածելակերպում, մեր ապրելու ձևում: Մենք պետք է որոշակի իրավիճակներում Աստծուն ավելի շատ վստահենք: Մենք կարող ենք, մենք պետք է մեր մերձավորի հանդեպ այլ վերաբերմունք ցույց տանք: Դեռ շատ բան կա անելու:

Եկեք նշան լինենք այն բանի, որ Աստված գործում է իր եկեղեցում և մեր սրտերում: Մտածեք այն մասին, որ մենք որոշել ենք նմանվել Քրիստոսի պատկերին: Աստված անում է իր բաժինը, մենք էլ պետք է մերն անենք:

Աստծո ներկայության մեկ այլ նշան է իր ժողովրդի միասնությունը: Հիսուս Քրիստոսը աղոթել է Աստծո ժողովրդի միասնության համար: Նրա համար աշակերտների միասնությունն արտացոլել է Երրորդության միասնությունը: Նա ցանկացել է, որ իր ժողովուրդը միաբան լինի, ինչպես միաբան են ինքն ու իր Հայրը, որպեսզի ցույց տա, որ այստեղ գործում է միասնությունը: Եկեղեցին Աստծո ներկայության տեսանելի նշանն է, ուստի մենք աշխատում ենք Աստծո ժողովրդի միասնության համար՝ որպես դրա ամենամեծ նշան: Որտեղ Աստված իսկապես ներկա է որպես միասնություն Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու, այնտեղ կա միաբանություն և միասնություն:

Մենք բոլորս կոչված ենք նպաստելու եկեղեցու, տաճարի կառուցմանը: Գիտակցորեն մենք պատասխանատու ենք եկեղեցու կառույցի ապագայի համար: Մենք բոլորս կոչված ենք ներդնելու մեր շնորհներն ու ուժը, որ նաև ապագայում տեղեկացվի Ավետարանը, որ Քրիստոսի գալստյան մասին կարողանան տեղեկանալ նաև հաջորդ սերունդները, որ ապագայում էլ կարողանա նախապատրաստվել Քրիստոսի հարսնացուն, որ ապագայում էլ կարողանան հավատացյալները միմյանց ու Աստծո հետ միասնություն ունենալ: Յուրաքանչյուր մկրտված կանչված է իր նպաստը բերելու՝ իհարկե, տարբեր շնորհներով և ունակություններով, մենք անգամ տարբեր պատասխանատվություններ ունենք: Սակայն, յուրաքանչյուրի կարիքն էլ կա, յուրաքանչյուրն էլ կարող է իր նպաստը բերել: Եկեք միասին ծառայենք Տիրոջը: Եկեք միմյանց լրացնենք մեր շնորհներով, դրա կարիքը կա մինչև Քրիստոսի գալուստը:

Անշուշտ, մենք չենք կարող այդ եկեղեցին, տաճարը մարդկային ձևով կառուցել: Եթե այդպես լիներ, յուրաքանչյուրը կասեր՝,, Այն պետք է ինձ համար

հարմար լինի: Ես ցանկանում եմ, որ եկեղեցին կառուցվի այնպես, որ ինձ դուր գա: Ես չեմ ուզում իմ կարծիքը փոխել: Ես ուզում եմ հասկացվել այնպիսին, ինչպիսին որ ես եմ: Ես չեմ ուզում իմ սովորությունները փոխել,,: Պատկերացրեք մի այդպիսի եկեղեցի, որն այդպես կառուցված լինի: Դա քաոս կդառնա: Ոչ, Աստված ասում է՝ ,, Դու պատասխանատու ես տաճարի կառուցման համար, բայց այն կառուցվելու է իմ պլանի համաձայն,,: Նրա պլանը շատ ճշգրիտ է:

Աստծո պլանը Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, առաքյալների ուսմունքը, ինչպես այն գրված է Աստվածաշնչում: Երբ ես խոսում եմ Աստվածաշնչի մասին, շատ հարցեր են առաջ գալիս: Շատ մարդիկ հենվում են Աստվածաշնչի վրա, որպեսզի իրենց սեփական կարծիքները քողարկեն: Աստվածաշունչն այսպես ամեն ինչի համար կիրառելի է: Կարելի է միշտ Աստվածաշնչում մի խոսք գտնել, որը կհաստատի սեփական կարծիքը: Ով ուզում է որևէ մեկին ոչնչացնել, նա կարող է կարդալ Աստվածաշունչը և հիմնավոր պատճառ գտնել դա կատարելու համար: Ես մի քիչ չափազանցնում եմ, սակայն դուք հասկանում եք, թե ինչ նկատի ունեմ:

Մենք չպետք է Աստվածաշունչն այս ձևով օգտագործենք: Մենք պետք է Աստվածաշունչը Սուրբ Հոգու լույսի ներքո կարդանք: Առաքյալների ծառայությունն առաջադրանք ունի Աստվածաշունչը Սուրբ Հոգու լույսի ներքո մեկնաբանելու, իսկ մենք բոլորս ստացել ենք Սուրբ Հոգու շնորհները: Խնդրում եմ, Աստվածաշունչը կարդալիս և մեկնաբանելիս օգտագործեք դա և ոչ թե՝ ձեր սեփական հայացքները: Եթե Աստվածաշունչը Սուրբ Հոգու լույսի ներքո են կարդում, ապա այդ տեքստերը սեր են արթնացնում Աստծո և մերձավորի հանդեպ, այդ դեպքում Աստվածաշունչ կարդալը շատ օգտակար է լինում, այդ դեպքում այն պարունակում է Աստծո և մերձավորի հանդեպ սիրո ավետիսը: Եվ մտածեք այն մասին, որ ավելի կարևոր է դուր գալ Աստծուն, քան՝ մարդկանց:

Եկեք այս ձևով աջակցենք տաճարի կառուցմանը: Ներդնենք մեր շնորհները, մեր ունակությունները, մեր ուժը, մեր էներգիան, որպեսզի ապագայում էլ կարողանա Աետարանը տեղեկացվել, Քրիստոսի գալուստը տեղեկացվել, որ հարսնացուն նախապատրաստված լինի և Աստծո զավակները կարողանան միմյանց հետ միասնություն ունենալ: Անշուշտ, այդ տաճարը դեռ պատրաստ չէ: Այն դեռ գտնվում է կառուցման փուլում, իսկ եթե նայեն այդ կառույցին որպես մի շենքի, ապա կնկատեն, որ ինչ-որ բան պակասում է: Մեր եկեղեցու տեսանելի մասը՝ ողջերը, ողջերի միասին հավաքվելը դեռ կատարյալ չէ: Խնդրում եմ, մի խանգարեք դրան: Սա շատ նորմալ է, այն գտնվում է կառուցման փուլում: Այն, ինչը արվում է, ոչ թե անկատարության հանրագումարն է, որը դուք կարողանում եք տեսնել, այլ այն ձևը, որով մենք վարվում ենք դրանց հետ:

Քրիստոսի գալստյան օրը նա եկեղեցու այն բաժինը, որը դրա համար նախապատրաստված է, իր հետ է վերցնելու: Նրանք կատարյալ չեն լինելու, բայց նա իր ողորմածությամբ և վաստակով նրանց կատարյալ է դարձնելու: Միայն այս ձևով մենք կարող ենք Աստծո արքայություն գնալ: Տաճարը նոր արարչագործության մեջ վերջնականապես կառուցված կլինի, եթե բոլոր մարդիկ, ովքեր հավատում են Հիսուս Քրիստոսին և հետևում են նրան, բոլորը, ովքեր ընդունվում են Աստծո կողմից, կատարյալ և հավիտենական միասնության մեջ ապրեն Աստծո հետ: Ինչպիսի ողորմածություն: Մենք կարիք չունենք այդքան երկար սպասելու: Մենք արդեն հիմա սպասում ենք Քրիստոսի գալստյանը:

Մյուս սպասավորների քարոզչական ծառայությունից հետո գլխավոր առաքյալն ասաց՝ Սուրբ Հոգու ուժը կախված չէ զոհասեղանից: Այն գործում է ինչպես նրանց մոտ, ովքեր երիտասարդ են, այնպես էլ՝ նրանց մոտ, ովքեր ծերացել են: Այս առավոտ ևս մենք հնարավորություն ունենք ապրելու Սուրբ Հոգու զորությունը:

Երբ մենք նախապատրաստվում ենք մեղքերի քավությանն ու Սուրբ Հաղորդության տոնակատարությանը, միասին աղոթում ենք՝,, Ներիր մեզ, մեր բոլոր մեղքերը, ինպես մենք ենք ներում մեզ պարտք եղողներին,,: Երբ մենք դա միասին աղոթում ենք, ապա աղոթում ենք ոչ միայն մեր մեղքերի քավության համար, այլ Աստծուն աղոթում ենք նաև մեր մերձավորի մեղքերի քավության համար, հետո պարտավորվում ենք ներել մեր մերձավորին: Սրանք երկու տարբեր բաներ են: Մի կողմից մենք խնդրում ենք մեր մերձավորին ներելու համար, և ապա, մենք ուզում ենք ներել մեր մերձավորին, եթե նա որևէ սարսափելի բան է արել մեր հանդեպ: Շատերը վախենում են և հարց տալիս իրենց՝,, Աստված ինձ կների՞, եթե ես ի վիճակի չլինեմ ներել ուրիշներին ,,:

Գլխավոր առաքյալ Լեբերը հաճախ էր ասում, որ պետք է այնպես անենք, որ պատրաստ լինենք ներելու: Մի անհանգստացիր, երբ քեզնից որոշակի ժամանակ կպահանջվի, մինչև դու կհասնես դրան: Աստված կտեսնի մերձավորին ներելու քո ձգտումը: Կա ևս մեկ ասպեկտ՝ մենք աղոթում և խնդրում ենք Աստծուն, որ ների մեր մերձավորին: Դա մեկ այլ

Նոր առաքյալներ՝ Նեսթոր Մանզելլին, Կլավդիո Վիդելան և Պաբլո Բասսոն

բան է, եղբայրներ և քույրեր, եթե դուք դեռ ի վիճակի չեք ձեր մերձավորին ներել, ապա առնվազն մեկ քայլ արեք և Աստծուն խնդրեք դա անել: Վանեք այն մտքերը, թե Աստված պետք է նրան պատժի, որ Աստված պետք է նրան դատապարտի: Աղոթենք՝ ,,Խնդրում եմ Աստված, ես չեմ կարողանում ներել, բայց դու ներիր նրան,,: Ես համոզված եմ, որ առաջին վճռական քայլը կայանում է նրանում, որ մենք էլ ենք կարողանում մերձավորին ներել: Սուրբ Հոգու զորությամբ կարող են անել այդ քայլը:

Եվ վերջապես, մենք ապրում ենք Սուրբ Հոգու զորությունը Սուրբ Հաղորդության տոնակատարության ժամանակ: Սուրբ Հոգու զորությամբ և ներգործությամբ դու կարող ես ոչ միայն հացն ու գինին, այլ նաև Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը ճաշակել: Դա հնարավոր է միայն Սուրբ Հոգու զորությամբ և ներգործությամբ:

Սուրբ Հաղորդության ճաշակմամբ, Քրիստոսի մարմնի և արյան ընդունմամբ ուժեղանում է մեր միասնությունը Հիսուս Քրիստոսի հետ: Նա ասում է մեզ՝,, Վերցրեք, դա ես եմ, տեսնու՞մ ես: Ես սիրում եմ քեզ և զոհաբերվել եմ քեզ համար: Տեսնու՞մ ես, ես այստեղ եմ, ես քեզ մոտ եմ: Ես ուզում եմ քեզ առաջնորդել դեպի իմ արքայություն և ցանկանում եմ, որ հավերժ մնաս ինձ մոտ: Վերցրու, դա ես եմ,,: Սա ուժեղացնում է միասնությունը Հիսուս Քրիստոսի հետ:

Երբ մենք ընդունում ենք Հիսուսի մարմինն ու արյունը և դրանով նաև նրա աստվածային բնությունը, մենք հաղթահարելու ուժ ենք ստանում: Մտածենք այն մասին, որ վերափոխենք մեզ: Եկեք մեր հոգևոր զարգացմամբ մեկ քայլ առաջ գնանք: Դրա համար մենք անհրաժեշտ ուժը ստանում ենք Սուրբ Հաղորդության տոնակատարությամբ: Երբ մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, հավաքվում ենք Քրիստոսի շուրջը, իսկ դա ուժեղացնում է մեր միասնությունը և մեր միաբանությունը: Անշուշտ, մենք շատ տարբեր ենք, բայց մենք միասին ենք Քրիստոսով:

Հիմնական մտքեր

Քրիստոսի եկեղեցին հավատացյալների ժողովն է, ովքեր մկրտված են և հետևում են Քրիստոսին: Մենք պետք է տեսանելի նշան լինենք այն բանի համար, որ Աստված ներկա է երկրի վրա ու մեր սրտերում և գործում է, իսկ մենք կոչված ենք աջակցելու եկեղեցու կառուցմանը: Դա մենք անում ենք Աստծո պլանի, Հիսուս Քրիստոսի Ավետարանի համաձայն:

ՀԻՍՈՒՍՆ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 18,1-5

Մի օր մարդիկ իրենց երեխաներին բերում են Հիսուսի մոտ: Նրանք ուզում են, որ նա օրհնի երեխաներին:

Աշակերտները փորձում են երեխաներին Հիսուսից հեռու պահել: Նրանք կարծում են, թե Հիսուսը կանհանգստնա: Նրանք մտածում են, թե երեխաները կխանգարեն Հիսուսին, քանի որ նրանք չգիտեին, թե Հիսուսը ինչքան շատ է սիրում երեխաներին:

Հիսուսը տեսնում է, որ աշակերտները ուզում են երեխաներին իրենից հեռու պահել: Նա ասում է՝ ,, Թողեք երեխաներին ինձ մոտ գալ: Նրանց հեռու մի պահեք, քանի որ նրանց է պատկանում երկնքի արքայությունը,,: Ապա նա ձեռքերը դնում է երեխաներին գլխներին և օրհնում նրանց: Մեկ ուրիշ անգամ աշակերտները ցանկանում էին Հիսուսից իմանալ, թե ով է ամենամեծը երկնային թագավորությունում: Այդ ժամանակ Հիսուսը

մի երեխայի կանչում է իր մոտ, կանգնեցնում է նրան կենտրոնում և ասում. ,, Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չփոխվեք ու չդառնաք երեխաների նման, դուք բնավ չեք մտնի երկնքի թագավորություն: Ով իր անձը խոնարհեցնի այս երեխայի նման, նա մեծ կլինի երկնքի թագավորության մեջ,,: Հիսուսը շարունակում է խոսել. ,, Ով մի այսպիսի երեխայի ընդունի իմ անունով, ինձ ընդունած կլինի, բայց ով գայթակղեցնի այս փոքրերից մեկին, որը հավատում է ինձ, ավելի լավ է, որ նրա վզից մի աղացքար կախվի, և նա խոր ծովի մեջ ընկղմվի: Մի արհամարհեք երեխաներին, քանի որ նրանց հրեշտակները երկնքում միշտ տեսնում են իմ երկնային Հոր դեմքը: Իմ Հայրը երկնքում ուզում է, որ յուրաքանչյուր երեխա պաշտպանված լինի,,:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԲԵՐԻՆ և ԵԼԵՆԱՅԻՆ՝ ՄԱՔՔԵՅՈՒՄ / ԱՎՍՏԱՐԱԼԻԱ/

Բարի օր, ինչպե՞ս եք,- մենք այսպես ենք ողջունում ձեզ: Մենք Ելենան և Ամբերն ենք: Երկուսս էլ վեց տարեկան ենք, զարմիկներ ենք և ծնվել ենք այստեղ՝ Ավստրալիայում: Մեր մայրիկները քույրեր են, նրանք 15 տարի առաջ իրենց ընտանիքներով Գերմանիայից տեղափոխվել են Ավստրալիա: Սա մի լուսանկար է մեր քույր-եղբայրների հետ: Երկուսս էլ կանգնած են հետևում, առջևում Քրիստինան է՝ չորս տարեկան, Նաթիանը՝ երեք, իսկ Ջակը երկու տարեկան է:

Ավստրալիան հայտնի է իր արտակարգ կենդանական աշխարհով: Դուք այստեղ մեզ տեսնում եք կենգուրույի և կոալայի հետ: Շատ մարդիկ կարծում են, թե կոալաները արջեր են, բայց նրանք պարկավոր կենդանիներ են, իսկ նրանցից այնքան հաճելի հոտ չի գալիս, ինչպիսին նրանց տեսքն է:

Մենք ապրում ենք ծովափին և սիրում ենք անգամ ձմռանը ավազե բուգեր կառուցել, կարողանում ենք օդապարուկներ թռցնել, քանի որ այստեղ հաճելի տաք է: Բացի այդ, այնքան շատ բան կա հայտնաբերելու՝ ծովախեցգետիններ, փոքր ձկներ, խխունջներ, կորալներ: Մի քանի շաբաթ առաջ մենք այստեղ անգամ կատվաձկներ տեսանք: Ձմռանը կարելի ափից դիտել կուզավոր կետերին, դա իսկապես արտակարգ է:

Մաքքեյի մեր համայնքը բաղկացած է 60 հավատացյալ քույր-եղբայրներից: Սա մի լուսանկար է կիրակնօրյա դպրոցի երեխաների և շրջանային առաքյալ Փեթեր Շուլթեի հետ, ով մեր համայնքից է:

Մենք հաճույքով ենք ուտում ավստրալական երշիկ կամ կարկանդակներ, որոնք մսով լցոնած շերտավոր խմորով բլիթներ են:

Սակայն, մեզ դուր է գալիս նաև գերմանական խոհանոցը: Հատկապես, մեզ դուր են գալիս մեր տատիկ- պապիկների բաղադրատոմսով շվաբական ուտեստերն և բրեցելները:

Այս լուսանկարն արվել է այն ժամանակ, երբ մենք բոլոր զարմիկներով ու զարմուհիներով հավաքվել էինք մեր տատիկի ու պապիկի մոտ:

Աղբյուր՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 06 2022, լուսանկարները՝ մասնավոր՝ manuk74; rashmisingh; Anikonaann; Dominik Rueß - stock.adobe.com

Լուսանկարը՝ Բրոն Ռենցի

Ակնարկ պաշտոն հասկացողության վերաբերյալ

,,Նորառաքելական ըմբռնումը հոգևոր պաշտոնի վերաբերյալ,,-այսպես է կոչվում 32 էջանոց բրոշյուրը, որը վերջերս տրվեց սպասավոր եղբայրներին- ահա ամենակարևոր հատվածները բոլոր հետաքրքրվողների համար :

Պաշտոնն ու ծառայությունը պատկանում են եկեղեցական կյանքին, առանց դրանց եկեղեցին չի կարող կատարել իր առաջադրանքը, այն է՝ վստահելի վկայություն տալ Քրիստոսի մասին: ,, Հոգևոր պաշտոնը ձեռնադրությամբ տրվող լիազորություն է, օրհնանք և սրբացում՝ Քրիստոսի եկեղեցում ծառայելու համար: Այն տրվում է Սուրբ Հոգու զորությամբ,, /Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն, ՆԱԵԴ 7,1/:

,, Քրիստոսի եկեղեցում պաշտոնից տարբերվում են Ավետարանը տեղեկացնելու և հավատացյալների բարրօրության համար կատարվող բազմաթիվ այլ ծառայությունները, որոնք կարող են իրականացվել նաև առանց ձեռնադրման ,,/ՆԱԵԴ 7,1/: Այսինքն՝ անպայման անհրաժեշտ չէ ձեռնադրությունը, որպեսզի համայնքում և եկեղեցում որևէ առաջադրանք կատարվի: ,,Պաշտոնից նույնպես տարբերվում է յուրաքանչյուր հավատացյալին ուղղված կոչը՝ ծառայել Տիրոջը՝ նրան հետևելով,, /ՆԱԵԴ 7,1/: Հավատացյալների այս ընդհանուր քահանայությունն իրականացվում է խոսքով և գործով Քրիստոսին հետևելով: .

Երկու բնությունները

Հիսուս Քրիստոսը, ինչպես կարծում և ընդունում են բոլոր դավանանքների քրիստոնյաները, ունի երկու բնություն՝ նա ,, ճշմարիտ մարդ է և ճշմարիտ Աստված,, /ՆԱԵԴ 3,4/: Եթե Քրիստոսի անձն ու գործունեությունը կազմում են եկեղեցու և այն ամենի մաշտաբը, որը կապված է եկեղեցու հետ,

ապա դրանից հետևում է, որ եկեղեցու ուսմունքը և եկեղեցական խորհուրդների ուսմունքը սերտորեն կապված են երկու բնության ուսմունքի հետ:

,,Քրիստոսի եկեղեցին ևս ունի թաքնված կամ անտեսանելի և տեսանելի կամ բաց կողմեր: Եկեղեցու անտեսանելի կողմը Հիսուս Քրիստոսի աստվածային բնույթի նման նկարագրելի չէ, սակայն նրա առկայությունը ընկալելի է եկեղեցական խորհուրդների և Աստծո խոսքի սրբարար ներգործությամբ: Քրիստոսի եկեղեցու տեսանելի կողմը Հիսուս Մարդու նման մասնակցում է մարդկության ընդհանուր պատմությանը: Ի տարբերություն նրա, եկեղեցում գործող մարդիկ մեղքի ներքո են գտնվում: Դրանից էլ եկեղեցում լինում են սխալմունքներ, սխալ շրջադարձեր ու սայթաքումներ, որոնք հատուկ են մարդկությանը,,/ ՆԱԵդ 6,3/: Պաշտոն հասկացողության համար երկու բնության ուսմունքը վճռորոշ նշանակություն ունի: Պաշտոնի և անձի հարաբերությունը որոշելու նպատակով այն պետք է պարզաբանվի:

Պաշտոն և անձ

Նոր կտակարանում Պողոսը ակնառու օրինակ է այն բանի, որ անձն ու պաշտոնը, անձնական կյանքն ու հասարակական գործունեությունը միասնություն են կազմում: Առաքյալը կարող է խոսել անձի և պաշտոնի միասնությունից, քանի որ նա լի է Քրիստոսի հանդեպ հավատով, հետևում է Քրիստոսին- մեկ անգամ չէ, որ եղել է նրա տառապանքների մասնակիցը- հավատարիմ է Ավետարանին:

Հավատամքի հինգերորդ դրույթում խոսվում է այն մասին, որ Աստված մարդու համար պաշտոն է նախատեսել: Այստեղից էլ պաշտոնը մարդկային գործ չէ և ոչ էլ համայնքային, այլ՝ այն Աստծո նվերն է եկեղեցուն,, / ՆԱԵԴ 2,4,5/: Որևէ պաշտոնի ընտրության համար ընտրվողի ասած ,այոն, տեղի է ունենում այն դեպքում, երբ մարդն ընդունում է աստվածային ընտրությունը և փորձում է իր անձով ամբողջովին համապատասխանել դրան: Լավ հատկություններն ու ունակությունները, որոնք ունի տվյալ անձը, ձեռնադրության արարողությամբ ծառայության մեջ է դրվում: Միաժամանակ հասկանալի է, որ ձեռնադրությամբ նոր ունակություններ չեն փոխանցվում:

ՆԱԵԴ-ի 7,6,3 հատվածը, որտեղ խոսվում է առաքյալի մասին՝ ,,որպես ձեր ուրախությանը նպաստողի,, կամ ,, որպես համայնքի համար օրինակի,, ; վերաբերում է պաշտոնի գործառության շրջանակին, հատկապես համայնքին: Նվիրվածությունը համայնքին կստացվի միայն այն դեպքում, երբ անձն ու պաշտոնը, պաշտոնավարումն ու անձնական կյանքի վարումը համապատասխանեն իրար այն առումով, որ երկուսն էլ հիմվեն Հիսուս Քրիստոսի վրա:

Անջատման ենթակա միություն

Պաշտոնն ու անձը կազմում են մեկ միավորում, ինչպես մարդն ու Աստվածը Հիսուսի մեջ, կամ տեսանելի և անտեսանելի եկեղեցին, կամ հացն ու գինին Քրիստոսի մարմնի և արյան հետ: Այնուամենայնիվ, այս միասնությունը կատարյալ չէ, այլ այն վտանգված է և փխրուն՝ անձի մեղավորության պատճառով: Թեև պաշտոնն ընդունվում է անձի կողմից և նա պատասխանատու է պաշտոնից բխող ծառայության կատարման համար, այնուամենայինով, նա միշտ հիմված է համայնքի վրա և իր տեղն ունի այնտեղ:

Նաև հոգևոր պաշտոնի ձեռնադրման գործողությունն է վերաբերում Քրիստոսի երկու բնության ուսմունքին՝ հավիտենական խոսքի աստվածային բնությունը Սուրբ Հոգու վկայությամբ կապվում է մարդկային բնության հետ: Ձեռնադրման ժամանակ պաշտոնը, որը սուրբ է և տրվում է Սուրբ Հոգու զորությամբ, կապվում է մեղավոր մարդու հետ:

Պաշտոնը անձի սեփականությունը չէ, այն նաև անջնջելի դրոշմ չէ մարդու վրա, այլ հանդիսանում և մնում է Քրիստոսի պարգևը, որը Հիսուս Քրիստոսն ունի իր տրամադրության տակ, և որը նա շնորհում է կամ չի շնորհում: Պաշտոնը անձից առանձնացնելու կամ անջատելու հնարավորությունը մեր եկեղեցում ձեռնադրությունը խորհուրդ չընդունելու փաստացի հետեւանքն է:

Պաշտոնի ասպեկտները

Պաշտոնը ընդունվում է ձեռնադրությամբ, այսինքն՝ լիազորության, օրհնանքի, սրբացման տրմամբ: Սպասավորի համար պաշտոնի սկզբնաղբյուրը Հիսուս Քրիստոսն է, և նրան է տրվում ձեռնադրության միջոցով, որն իրականացվում է առաքյալի կողմից և որը-նորից շեշտելու համար- խորհուրդ չէ: Մարդը Սուրբ Հոգու միջոցով ինչ-որ բան է ընդունում, որը դուրս է նրա հնարավորություններից ու ունակություններից:

Ինչպես ողջ եկեղեցին, այնպես էլ սպասավորը վկայում է Սուրբ Հոգու ներկայությունը և պետք է աղոթի նրա ներգործության համար պաշտոնի կատարման մեջ: Սուրբ Հոգին ոչ միայն հնարավոր է դարձնում, որ սպասավորը կարողանա կատարել իր առաջադրանքը, այլ ներգործում է պաշտոնի կատարման ժամանակ՝ անկախ նրանից, թե դա եկեղեցական խորհուրդների նվիրաբերման, քարոզչական կամ հովվական բնույթ է կրում:

Հոգևոր պաշտոնը մի կողմից ծառայություն է Աստծո նկատմամբ, մյուս կողմից՝ մարդու նկատմամբ: Այս առումով պաշտոնավարումը հիմնվում է սիրո երկու պատվիրանի վրա: Աստծո հանդեպ ծառայությունը կայանում է գովաբանության և փառաբանության մեջ, Աստծո բարեգործությունների տեղեկացման մեջ: Մերձավորի հանդեպ ծառայությունը մի կողմից կայանում է հոգևոր խնամքի և համայնքի անդամներին աջակցելու մեջ, մյուս կողմից՝ բոլորին այդ խնամքն ու աջակցությունը տրամադրելու ջանքերում:

Պաշտոնն ու լիազորությունը

Լիազորություն բառի հունարեն ,, էքսուզիա,, տարբերակը Նոր կտակարանում տարբեր նշանակություն ունի: Այն բնորոշում է այն լիազորությունը, որով ուսուցանում է Հիսուսը, մեղքերն է ներում և հրաշքներ գործում, բայց և՝ աշակերտներին փոխանցված լիազորությունն ընդհանրապես: Աշակերտների լիազորությունը, ինչպես տեղեկացնում են Նոր կտակարանային տեքստերը, անմիջականորեն կապված է Հիսուսի հետ, ինչպես նրա լիազորությունն է անմիջականորեն կապված Հոր հետ: Այն պաշտոնները, որոնք ուներ Հիսուսը՝ թագավոր, քահանա, մարգարե, լիազորության արտահայտություններ են, որը հիմնված է Աստծո վրա և արտահայտվում է պաշտոնների դասակարգման մեջ: Հիսուսը այն ուղարկվածն է, ով ունի Աստծո կողմից տրված համապատասխան լիազորությունները:

Առաքյալների ծառայությունը իրականացնում է այն լիազորությունը, որը տրված է Հիսուս Քրիստոսի կողմից: Մյուս պաշտոնների լիազորությունները բխում են առաքյալների ծառայության լիազորությունից:

Պաշտոնների ծագումը

Պաշտոնների վարման և համայնքի մեկնարկային զկիզբը աշակերտներն են, ովքեր շրջում էին Հիսուսի հետ և խոսքով ու գործով վկայում էին Աստծո կողմից նրա ուղարկված լինելը: Այս աշակերտներից Հիսուսն ընտրեց տասներկու առաքյալներին:

Միայն Հոգեգալուստից հետո են նրանք Սուրբ Հոգու ներգործությամբ ունենում առաքելական զորություն և հեղինակություն: Նոր կտակարանը պաշտոնի մասին ոչ մի ուսմունք չի ներկայացնում: Վաղ քրիստոնեական համայնքները չունեին ընդհանուր պարտադիր և կազմավորված պաշտոնների կանոնակարգեր: Երուսաղեմի համայնքում սկզբում միայն առաքյալներն էին ակտիվ: Այնուհետև աղքատներին օգնողներ ներգրավեցին համայնքում սարկավագական ծառայությունն ապահովելու համար: Պողոսի գրվածքներում ակնարկներ կան ծառայությունների հետագա զարգացման մասին: Նոր կտակարանի համայնքերի համար առավել վճռորոշ էին պրեսբիտերները (ավագները) և էպիսկոպոսները (եպիսկոպոսներ), որոնք ներկայացվում էին որպես համայնքի առաջնորդ:

Պաշտոնների դասակարգումը ժամանակների փոփոխման հետ

Եթե նայում ենք վերջին հարյուր տարվա զարգացումներին, ապա պարզ է դառնում, որ եկեղեցին բազմիցս հրաժարվել է պաշտոններից կամ էլ հիմել է նորերը:

Առաքյալի պաշտոնը ստեղծվել է առաքելական շարժումով դարերի ընթացքում: Մինչև 20-րդ դարի սկզբի տասնամյակները Նորառաքելական եկեղեցին ուներ այն պատկերացումը, որ եկեղեցին անհրաժեշտորեն պետք է ունենա չորս պաշտոն՝ առաքյալ, մարգարե, ավետարանիչ և հովիվ: Եփեսացիներին ուղղված նամակը չի սահմանում պաշտոնի ընդհանուր և հավերժ վավերական դասակարգում: Այս բացահայտման հիման վրա քառակի պաշտոնի վարդապետությունը ճանաչվեց որպես անհիմն:

Պաշտոնների դասակարգումը, որն առկա է դավանաբանության մեջ, գնում է ավելի շատ դեպի սակավ պաշտոնների դասակարգման, որը սկիզբ է առել գլխավոր առաքյալ Յոհան Գոթֆրիդ Բիշոֆֆի ժամանակներից: Ժամանակի ընթացքում այնպիսի պաշտոններ, ինչպիսիք են մարգարեն և համայնքի ավագը, վերացան կամ այլևս չկիրառվեցին: Այդպես է նաև ենթասարկավագի պաշտոնի պարագայում:

Ավետարանչի, հովվի, շրջանային ավետարանչի և շրջանային ավագի պաշտոններն այլևս չեն տրվում:: Շրջանային առաքյալի և եպիսկոպոսի պաշտոններ նույնպես այլևս չեն տրվում: Այնուամենայնիվ,

«շրջանային առաքյալ» տերմինը դեռ օգտագործվում է, մասնավորապես այն առաքյալի համար, ով առաջադրանք ունի ղեկավարելու տարածաշրջանային եկեղեցին: Պահպանվում է նաև «եպիսկոպոս» տերմինը և օգտագործվում է որպես բնորոշում քարոզիչ սպասավորի, ով առաքյալի օգնականն է:

Պաշտոնի լիազորություն և պաշտոնից բխող առաջադրանք

Պաշտոնը ներառում է և՛ պաշտոնի լիազորությունները, և՛ պաշտոնից բխող առաջադրանքը: Պաշտոնի լիազորությունը աստվածաբանական բնույթ է կրում, պաշտոնի առաջադրանքը՝ եկեղեցական կանոնական: Պաշտոնի լիազորությունը հիմված է Հիսուս Քրիստոսի վրա, որը Սուրբ Հոգու զորությամբ շնորհվում է առաքյալի կողմից ձեռնադրվելով՝ գործելու և խոսելու Երրորդություն Աստծո անունով: Պաշտոնի լիազորությունը տրվում է ձեռնադրությամբ: Այն դադարում է հրաժարականի, առաքյալի կողմից պաշտոնից հեռացվելու կամ մահվան դեպքերում:

Պաշտոնը կրողը իրավունք ունի և պարտավոր է կատարել պաշտոնից բխող առաջադրանքը իրեն տրված պաշտոնական լիազորություններին համապատասխան՝ սահմանված տեղի և ժամանակի շրջանակներում: Պաշտոնի ծառայությունն ավարտվում է մշտական վայրի փոփոխության պատճառով, թոշակի անցնելու, առաքյալի կողմից պաշտոնից ազատվելու, պաշտոնից հեռացվելու կամ մահվան դեպքերում:

Ձեռնադրություն, հանձնարարություն, նշանակում

Այժմ գործող պաշտոնների կանոնակարգում պաշտոնի եռաստիճան կառուցվածքն ավելի հստակ է երևում, քան նախկինում: Պաշտոնին վերաբերող հոգևոր լիազորությունն այժմ ավելի հստակորեն տարբերվում է եկեղեցական կազմակերպությունում կատարվող առաջադրանքներից:

Ձեռնադրությունը հոգևոր պաշտոն տալն է: Այն իրականացվում է Երրորդություն Աստծո անունով առաքյալի կողմից՝ ձեռքը գլխին դնելով և աղոթքով: Դրանով տրվում է լիազորություն, սրբացում և օրհնություն:

Ձեռնադրության ժամանակ սարկավագը ստանում է խոսքը ճիշտ տեղեկացնելու և Երրորդության օրհնությունը տալու լիազորություն: Բացի այդ, քարոզիչը իր պաշտոնում ձեռնադրվելուց հետո լիազորություն է ստանում տալու մեղքերի թողություն, կատարելու Սուրբ մկրտության և Սուրբ Հաղորդության խորհուրդները, օրհնության արարողությունները: Առաքյալի պաշտոնում ձեռնադրվելով առաքյալը լիազորություն է ստանում կատարելու Սուրբ Կնունքի խորհուրդը և ձեռնադրելու սպասավորներին:

Ձեռնադրվող սպասավորներին ընտրելիս հաշվի է առնվում այն փաստը, որ նրանք պետք է ունենան այն իրավասությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ պաշտոնից բխող ծառայություններն իրականացնելու համար:

Այն, որ գլխավոր առաքյալը ևս ձեռնադրվում է, փաստում է այն առանձնահատկությունը, որ գլխավոր առաքյալը ևս առաքելական ծառայության կրողն է: Դա տեղի է ունենում, քանի որ գլխավոր առաքյալը Պետրոսի ծառայությունն ու դրա հետ կապված բանալիների լիազորությունը կատարելիս ստանձնում է ամբողջ եկեղեցու ղեկավարությունը:

Հանձնարարությունը հոգևոր պաշտոնի հետ կապված ծառայության փոխանցումն է, որը ներառում է տարածաշրջանային եկեղեցու, շրջանի կամ համայնքի ղեկավարում: Նրանով ստանում են սրբացում ու օրհնություն: Հանձնարարությունը կապված չէ պաշտոնական գործունեության ժամանակի հետ, բայց ավարտվում է դրա հետ:

Նշանակումը հոգևոր ծառայության փոխանցումն է սպասավորներին կամ աշխարհականներին: Այս ծառայության կատարման համար աղոթում են Աստծո օրհնության համար : Սպասավորները կարող են նշանակվել օգնելու համար այն սպասավոր եղբայրներին, ովքեր իրականացնում են ղեկավար գործառույթներ:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Շրջանային առաքյալները հանդիպեցին Բուենոս Այրեսում երկու տարի ուշացումով

Լուսանկարները՝ Հարավային Ամերիկա, Փեթեր Յոհաննինգ

Ինչի մասին են խոսում շրջանային առաքյալները

Բուենոս Այրեսում այսօր ավարտվեց երկու տարի ուշացումով տեղի ունեցած շրջանային առաքյալների միջազգային ժողովը: Օրակարգում բավականին տարբեր թեմաներ կային - ակնարկ այդ մասին:

Ընդհանուր առմամբ հանդիպումը արգենտինական մայրաքաղաքում պլանավորված էր անցկացնել 2020 թվականի Հոգեգալստյանը: Սակայն, Կորոնայի հայտնի համավարակը անհնար դարձրեց նմանատիպ ուղևորություններն ու ժողովները նաև հաջորդ տարվա առաջին կիսամյակին: Առաջին հանդիպումը շրջանային առաքյալները կարողացան տոնել միայն 2021 թվականի նոյեմբերին՝ Ցյուրիխում:

,,Քննարկման ժամանակ մենք ամրագրեցինք, թե ինչ ծավալուն և խորն է այս թեման: Խոսքը նրա մասին չէ, որ պարզապես ,այո, կամ ,ոչ, պետք է ասել,- շեշտեց գլխավոր առաքյալը: Մենք ժամանակ ենք տալիս մեզ մեր խորհրդակցությունների համար, և, երբ բոլոր որոշումները պատրաստ լինեն, մենք կհրատարակենք մի բովանդակալից կոնցեպտ, ինչպես արեցինք 2019 թվականին՝ պաշտոն հասկացության փոփոխության հետ կապված,,:

Բաբելոնի պատճառով՝ մեկ Աստվածաշունչ, բազմաթիվ գրքեր

Անգլիախոս տարածաշրջանների եկեղեցիների շրջանակում բարձրաձայնվեց ժամանակակից բառապաշարով Աստվածաշնչի թարգմանության հարցը: Այնտեղ կիրառվում է Նյու Քինգ Ջեյմսի տարբերակը, որը փոխարինել է 2001թվականի Քինգ Ջեյմսի դասական տարբերակին: Այնուամենայնիվ, այս վերանայված տարբերակը ևս բնորոշվում է ավանդական լեզվով:

Տարբեր թարգմանությունների մասնագիտական գնահատման արդյունքն այն է, որ ոչ մի կատարյալ այլընտրանք չկա: Նյու Քինգ Ջեյմսի տարբերակը Նորառաքելական եկեղեցում շարունակում է կիրառվել ուսուցման և պատարագի համար: Պաշտոնական շրջանակից դուրս ողջունվում է լրացուցիչ թարգմանություններով զբաղվելը:

Սկզբունքորեն նույնը վերաբերում է բոլոր երկրներին՝ ուսուցման և պատարագի համար Աստվածաշնչի պաշտոնական թարգմանության կողքին հնարավոր է համեմատությունը ժամանակակից հրատարակության հետ, այս առումով շրջանային առաքյալները առաջարկություններ կանեն:

Հաջորդ կետը՝ կրոնական պարապմունք

Հանդիպման շրջանակում շրջանային առաքյալները տեղեկացրեցին երեխաների համար պարապմունքների նյութերի առաջընթացի մասին՝ կիրակնօրյա դպրոցի աշակերտների համար տպագրված նյութերի, վեբ-պորտալների և բջջային սարքերի հավելվածների ծավալուն առաջարկից բացի կլինի նաև մի կարճ տարբերակ: Դա կուղղվի այն երկրներին / ամենից առաջ Աֆրիկա/, որտեղ ենթակառուցվածքները թույլ չեն տալիս, որ յուրաքանչյուր երեխայի տրվի ամբողջական տարբերակը: Կրոնական պարապմունքների համար սկսվել են գերմանալեզու նյութերի վրա աշխատանքները ավելի մեծ երեխաների համար:

Գլխավոր առաքյալ Շնայդերը պարապմունքների թեման սրտամոտ դարձրեց. ,, Ուսուցանեք սպասավոր եղբայրներին և բոլոր համայնքներում երեխաների համար հիմնեք կիրակնօրյա դպրոցներ ,,- որպես ծրագիր հանձնարարել էր եկեղեցու ղեկավարը 2015 թվականի Հոգեգալստյանը՝ Զամբիայում աֆրիկյան առաքյալների ժողովի ժամանակ: ,, Ես գիտակցում եմ, որ դա մեծ ջանքեր է պահանջում, սակայն, ես հավատում եմ, որ Աստծո հետ ոչինչ անհնար չէ:

Պատասխանատվությունը կիսել

Հետո եկավ այս առանձնահատուկ, պատմական պահը՝ գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հորդորեց շրջանային առաքյալներին՝ գաղտնի քվեարկել Միջազգային Նորառաքելական եկեղեցու ֆինանսական վարչակազմ ընտրելու համար: Այն հետո պետք է գլխավոր առաքյալին՝ որպես ընդհանուր եկեղեցին ղեկավարող բարձրագույն մարմնի, ֆինանսական գործերում խորհուրդներ տալու և աջակցելու առաջադրանք ստանձնի: Ընտրվեցին շրջանային առաքյալներ Մարկ Վոլը / Կանադա/, Միխայել Էրիշը / Հարավային Գերմանիա/, Յոզեֆ Օփեմբա Էկհույան / Արևելյան Աֆրիկա/ և առաքյալ Ռոբերտ Ուորշիփը / Հարավային Աֆրիկա/:

,, Ես շատ շնորհակալ եմ այս քայլի համար,,- խոստովանեց գլխավոր առաքյալը ընտրությունից հետո: Երկար ժամանակ նրա փափագն է եղել ձեռնադրությամբ գլխավոր առաքյալին տրված եկեղեցու ղեկավարումը, հատկապես ֆինանսական հարցերում, կիսել ընտրված վարչություն հետ:

Չնայած օդորակիչներին՝ ոչ մի սառը տրամադրություն չկար

Տեղեկատու

02.10.2022	Էվրեքս (Ֆրանսիա)
13.10.2022	Թազիհոն (Ֆիլիպիններ)
15.10.2022	Գեներալ Սանտոս (Ֆիլիպիններ)
16.10.2022	Թուփի (Ֆիլիպիններ)
23.10.2022	Լիմբուրգի նահանգ Նիդերլանդներ)
30.10.2022	Քիլ (Հյուսիս-Արևելյան Գերմանիա)
06.11.2022	Ինդիանա (ԱՄՆ)
13.11.2022	Նյուրենբերգ (Գերմանիա)
20.11.2022	Վինթերտուր (Շվեյցարիա)
27.11.2022	Մոլդովա(Մոլդովա)
01.12.2022	Բլոմֆոնտ (Հարավային Աֆրիկա)
04.12.2022	Քեյփթաուն (Հարավային Աֆրիկա)
11.12.2022	Վիսբադեն (Գերմանիա)
28.12.2022	Ամսեվիլլ (Ֆրանսիա)
25.12.2022	դեռ պետք է որոշվի (Ֆրանսիա)

New Apostolic Church
International